ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ

ՄԱՐԶՊԵՏ

<<12 >> << հոկտեմբեր>> 2016 թ N 92

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 96-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Անուշ Գրիգորյանի հետ կնքած 2011 թվականի հոկտեմբերի 12-ի N176 աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը, 2016 թվականի սեպտեմբերի 30-ի N 01/14.1/6153-16 ծանուցագիրը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. 2016 թվականի հոկտեմբերի 12-ից լուծել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Եղեգնաձորի թիվ1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Անուշ Գրիգորյանի հետ կնքած 2011 թվականի հոկտեմբերի 12-ի N176 աշխատանքային պայմանագիրը:
2. 2016 թվականի հոկտեմբերի 12-ից Անուշ Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Եղեգնաձորի թիվ1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ